

ԵՐԵՒԱՆ - ԷՐԵՔՈՒՆԻ

Խօսք՝ Պարոյր Մեւակ

Երաժշտ.՝ Է. Յովհաննիսեան

Երեւան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դուին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարձ կարօտ, մեր քարէ նազանք:

Կրկներգ.- Երեւան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի,
Քո Մասիս հօրով, քո Արաքս մօրով,
Մեծանաս դարով, Երեւան:

Մենք արեան կանչեր ունենք մեր սրտում,
Անկատար տենչեր ունենք դեռ շատ.
Մեր կանչն առանց քեզ՝ ի գուր կը կորչի,
Առանց քեզ մեր տաք տենչն էլ կը սառչի:

Կրկներգ.- Կեանքում ամէն սէր լինում է տարբեր,
Իսկ մենք բոլորս ենք քեզմով հարբել,
Տաք է սէրը մեր՝ շէկ քարերիդ պէս,
Հին է սէրը մեր՝ ձիգ դարերիդ պէս: